ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԱՎԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

2017
ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սիրելի համաքաղաքացիներ,

Երևանի քաղաքապետարանն ամփոփում է աշխատանքային տարին արդեն ավանդական դարձած տարեկան հաշվետվությունների թողարկմամբ: Լիահույս եմ, որ դուք կթերթեք հաշվետվության էջերը և կծանոթանաք անցած տարվա ընթացքում Ձեր վարչական շրջանում կատարված աշխատանքներին: Ուրախությամբ եմ արձանագրում, որ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում մեծածավալ աշխատանքներ են իրականացվել, և տարեվերջին կարող ենք վստահ ասել, որ ձեռքբերումների շարքը ոգևորիչ է: Պետք է նշեմ, որ այդ գործում իրենց զգալի լուման հավասարապես ներդրել են ինչպես մեր բնակիչները, այնպես էլ վարչական շրջանների ղեկավարները:

Վստահ եմ, որ առկա որակական փոփոխությունները՝ բարեկարգված բակային տարածքները, կառուցված խաղահրապարակները, ավելացած կանաչապատ տարածքները, բարեկարգ ու լուսավոր մայթերն ու փողոցները իրենց անմիջական ազդեցությունն են ունենալու Երևանի յուրաքանչյուր բնակչի կյանքի որակի և ընդհանուր քաղաքային միջավայրի դրական փոփոխության տեսանկյունից:

Վստահ եմ նաև, որ այն տեսանելի արդյունքը, որ արձանագրել ենք հարմարավետ քաղաքային միջավայր ստանալու գործում, լինելու է յուրաքանչյուրիս հոգատար վերաբերմունքի ու հոգածության առարկան, ինչն էլ թույլ է տալու իրականացնել նոր ծրագրեր՝ մեր մայրաքաղաքի և նրա վարչական շրջանների զարգացումը դեպի երկարաժամկետ հեռանկար ուղղորդելու նպատակով:

Տարոն Մարգարյան
Երևանի քաղաքապետ

Հարգելի՛ ավանցիներ,

Հուրախություն բոլորիս, 2017 թվականին շարունակել ենք արձանագրել նոր ձեռքբերումներ և ունեցել ենք շոշափելի արդյունքներ: Ավանը մեր մայրաքաղաքի ամենաբարեկարգ, կոկիկ և օրինակելի վարչական շրջաններից մեկն է, ինչը մեզանից յուրաքանչյուրի սրտացավ ու հոգատար վերաբերմունքի, պատասխանատվության ու բարեխղճության արդյունքն է, միևնույն ժամանակ՝ անկեղծ հպարտության առարկան: Չեմ կարող բարձր գնահատականի չարժանացնել այն համատեղ աշխատանքը և փոխըմբռնման այն բարձր աստիճանը, որն առկա է վարչական շրջանի ղեկավարության և բնակիչների միջև: Յուրաքանչյուր ավանցի իր առաջարկություններով, Ավանն ավելի հարմարավետ տեսնելու իր ձգտումով ու օգնություն ցուցաբերելու պատրաստակամությամբ իր անուրանալի դերն ունի այն արդյունքներում, որոնք այսօր տեսանելի են:
Առաջիկա տարիներին աշխատելու ենք նույն ոգով, որպեսզի Ավանն ունենա ժամանակակից ենթակառուցվածքներ, կրթական և մշակութային օրինակելի օջախներ, հանգստի ու ժամանցի հարմարավետ անկյուններ: Ավանցին գործով է ապացուցել իր սերն ու կապվածությունը հարազատ վարչական շրջանին, և սա կարևոր ու լավատեսություն ներշնչող փաստ է:

Ավան վարչական շրջանի ղեկավար
Մանվել Ջավադյան

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2017 թվականին Ավան վարչական շրջանում իրականացվել են ասֆալտապատման, եզրաքարերի վերանորոգման և հենապատերի կառուցման աշխատանքներ:

- Կատարվել են շուրջ **55000 քմ** ընդհանուր մակերեսով փողոցների, մայթերի և բակային տարածքների ասֆալտապատման աշխատանքներ:
- Վերանորոգվել են **700 մ** ընդհանուր երկարությամբ եզրաքարեր:
- Կառուցվել է **120** մ երկարությամբ հենապատ:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

2017 թ. զգալի աշխատանք է կատարվել շքամուտքերի, շքապատշգամբների, վերելակների և տանիքների վերանորոգման ուղղությամբ:

- Վերանորոգվել են **44** բազմաբնակարան շենքերի 63 շքամուտքերը, աշխատանքներն իրականացվել են բոլոր հարկերում:
- **15** շենքերի մուտքերի դռները փոխարինվել են նորերով:
- **106** շենքերում նորոգվել են **8487** քմ ընդհանուր մակերեսով հարթ, Աճառյան 1 շենքում՝ **450** քմ ընդհանուր մակերեսով թեք տանիքներ:
- Աճառյան թաղամասի շենքերում վերանորոգվել է **10** վթարային պատշգամբ:
- Բնակարանային ֆոնդի և բակային տարածքների պահպանման և շահագործման խնդիրների լուծման նպատակով համագործակցություն է իրականացվել շրջանի տարածքում գործող **8** համատիրությունների հետ:
- Հիմնանորոգվել է **6** վերելակ:

ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

2017 թ. կառուցվել են խաղահրապարակներ, պուրակ, իրականացվել են բակային ենթակառուցվածքների ներկման և վերանորոգման աշխատանքներ:

- Կառուցվել է նոր պուրակ Դուրյան թաղամաս 50 հասցեում:
- Կառուցվել են 4 խաղահրապարակներ Ծարավ Աղբյուր թաղամաս 55/5, Շահինյան փողոց 5-րդ նրբանցք, Չարենցի 16, Ավան Առինջ 1 մկշ,1/4 հասցեներում:
- Տեղադրվել են **9** մանկական խաղեր և **6** մարզասարքեր:
- Վարչական շրջանի այգիներում, խաղահրապարակներում կատարվել են ներկման, աղբամանների, նստարանների, ցանկապատերի և խաղային համալիրների վերանորոգման աշխատանքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

2017 թ. սոցիալական ծրագրերը շարունակել են մնալ վարչական շրջանի աշխատակազմի ուշադրության կենտրոնում:

- Ծաղկաձորի «Լավա Աղբյուր» ճամբարում կազմակերպվել է դպրոցահասակ **80** երեխայի ամառային հանգիստը:
- **137** ծնողներ այցելել են ԼՂՀ և ՀՀ սահմանամերձ գոտիներում ծառայող իրենց զավակներին:
- «Էրեբունի- Երևան 2799» տոնակատարության սոցիալական բաղադրիչի շրջանակում **213** ընտանիքի հատկացվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա:
- **540** աշակերտներ ստացել են դպրոցական պայուսակներ, գրենական պիտույքներ:

- «Խութ» բարեգործական հիմնադրամի և «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության համագործակցության արդյունքում տարաբնույթ աջակցություն է ցուցաբերվել **7000** շահառուի: Նույն բարեգործական հիմնադրամի աջակցությամբ տարվա ընթացքում սոցիալապես անապահով **1250** ընտանիքների տրվել է պարենային, **859** քաղաքացու՝ նյութական աջակցություն:

- Ամանորյա տոների առթիվ սոցիալապես անապահով **1116** անձի տրամադրվել են սննդի փաթեթներ և **2200** երեխաների՝ ամանորյա նվերփաթեթներ:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

2017 թ. զգալի և տեսանելի աշխատանք է կատարվել մանկապարտեզների վերանորոգման, գույքով համալրելու ուղղությամբ:

Հիմնովին վերանորոգվել են հ.հ. 51, 52, 53, 54, 55, 56, 57 մանկապարտեզների խմբասենյակները:

- **7** մանկապարտեզների համար ձեռք են բերվել պահարաններ, սեղաններ, աթոռներ, մահճակալներ:
- Կրթամշակութային ծրագրերի շրջանակներում մանկապարտեզները համագործակցել են Արգենտինայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Չինաստանի, Լատվիայի, Վրաստանի, Հունաստանի և Ռուսաստանի դեսպանատների հետ:
- Ապահովվել է **1649** երեխաների անվճար նախադպրոցական կրթությունը:

2017 թ. ակտիվացում է արձանագրվել վարչական շրջանի մշակութային կյանքում:

- Ավանի թիվ 1 գրադարանի ընթերցողների թիվն ավելացել է՝ կազմելով **1578**, թարմացվել է գրքային ֆոնդը:
- Գևորգ Բուդաղյանի անվան արվեստի դպրոց հաճախողների թիվն ավելացել է 20%-ով, ներկայումս կազմում է **426** սան:
- Ավանի մշակույթի տուն հաճախողների թիվն ավելացել է 15%-ով, ներկայումս կազմում է **255** սան:
- Պետական, ազգային տոների, ինչպես նաև այլ առիթներով անցկացվել է **285** մշակութային միջոցառում:

ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏ

2017 թվականին սպորտային հաստատություններն արձանագրել են սաների թվի աճ:

- Ավանի մանկապատանեկան համալիր մարզադպրոց հաճախող սաների թիվն աճել է 20 %-ով, ներկայումս կազմում է 310 սան:
- Ավանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց հաճախող սաների թիվն աճել է 15 %-ով, ներկայումս հաճախում է 315 սան:
- 2017թ. ընթացքում կազմակերպվել է **65** միջոցառում:

2017 թ. վարչական շրջանում զգալի աշխատանք է կատարվել ոռոգման համակարգի վերանորոգման և կանաչապատման ուղղությամբ:

- Վերանորոգվել է **2208** գծմ ոռոգման համակարգ:
- Տնկվել է **1350** ծառ և թուփ, **2100** վարդի թուփ, **189182** ծաղիկ:
- Իրականացվել է կանաչ տարածքների և ծառերի ամենօրյա խնամք:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼ. ՑԱՆՑԵՐ», «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ», «ԵՐԵՎԱՆ ԳԱԶ» ՓԲԸ-ՆԵՐԻ ՀԵՏ

2017 թվականին ծավալուն աշխատանք է կատարվել ջրագծերի, կոյուղագծերի, դիտահորերի և անձրևատար խողովակների վերանորոգման, մալուխային լարերի և վթարային էլեկտրասյուների փոխարինման և այլ ուղղություններով:

- Վերանորոգվել և փոխարինվել է **109** գծմ ջրատար և կոյուղատար խողովակ:
- Վերանորոգվել է **11** դիտահոր և անձրևատար:
- Հիմնովին փոխվել է **3** շենքերի **580** գծմ մալուխային համակարգը:
- Վթարային վիճակում գտնվող **17** էլեկտրասյուներ փոխարինվել են նորերով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ

2017 թվականին ծավալուն աշխատանք է կատարվել վարչական շրջանի արտաքին լուսավորության ցանցի արդիականացման և ընդլայնման ուղղությամբ



Անցկացվել է 1980 գծմ լուսավորության նոր ցանց՝ 40 լուսակետով:



ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

2017 թ. բազմաթիվ ուղղություններով զարգացել են միջազգային կապերը:

- Երևանի միջազգային գործընկերության շրջանակում շարունակվում է համագործակցությունը Մոսկվա, Կրասնոդար, Կիև, Խարկով, Ռիգա, Փարիզ, Մարսել և Լիոն քաղաքների վարչական շրջանների հետ:
- Փորձի փոխանակման նպատակով կատարվել են փոխադարձ այցելություններ Լատվիայի Հանրապետության Ռիգա քաղաք, Ուկրաինայի Հանրապետության Խարկով քաղաք, ՌԴ Կրասնոդար քաղաք:
- Ավան վարչական շրջանը համագործակցում է ԼՂՀ Ստեփանակերտ, Մարտունի և Ճարտար քաղաքների հետ:
- Ավան վարչական շրջանը համագործակցում է նաև ՀՀ Արմավիրի մարզի հետ:

Մենք հաշվետու ենք
մեր համաքաղաքացիներին

ԹԵԺ ԳԻԾ՝
+(374 11) 518-111
avan@yerevan.am

www.yerevan.am